Շրկված Արձանագրություն N 4

<<ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/5>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

01. 04. 2022թ.

Ք. Մեծամոր

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար **համակարգիչների և բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի** ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/5** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով ընթացակարգի մասնակից՝ **ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտում առկա էին անհամապատասխանություններ՝ Հավելված 1-ում բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը և տեխնիկական բնութագրում ներկայացված չէր **համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ սարքերի** ֆիրմային անվանումները, ապրանքային նշանները, մակնիշները և արտադրողի անվանումները, ինչպես նաև բացակայում էր իրական շահառուների մասին տեղեկատվությունը:

30.03..2022 թվականին մասնակցին տրվել էր մեկ /1/ աշխատանքային օր, անհամապատասխանությունները շտկելու համար: **ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի** կողմից չի կատարվել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների շտկումը:

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի **45-րդ կետի**, **ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/5** ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի՝

ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի հայտը մերժել և 5 աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը ուղարկել Լիազոր մարմին՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հանձնաժողովը որոշեց՝

ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին և 2-րդ** չափաբաժինները հայտարարել չկայացած, քանի որ մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժվել է, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, գնման ընթացակարգը՝ **1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով հայտարարվում է չկայացած:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Աշխատակազմի քարտուղար — Մ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Գլխավոր մասնագետ Է.Մարկոսյան

Քարտուղար՝

Գլխավոր մասնագետ Հ. Հարությունյան